Նրանք կանգնեցին մի բաւական կոկիկ տան հանդէպ: Դռները բացուեցան, մտան մի հովասուն, ծառազարդ բակ: Ծառերի ներքոյ նստած էր մի հասակաւոր բարեշուք կին եւ ինչ-որ հիւսում էր ձեռքում: Տեսնելով եկողներին, դրեց իր ձեռագործը փոքրիկ, բոլորակ սեղանի վրայ, վերկացաւ եւ դիմաւորեց նրանց:

— Ա՛խ, պարոն Միսաքեան, — բացականչեց կինը, առաջ վազելով, — ես ամենեւին չէի սպասում... Ինչպէ՞ս եք... այդ ի՞նչ բախտով... այդ ո՞ր քամին բերեց ձեզ... — եւ շփոթեցրեց հիւրին բազմաթիւ հարցերով:

Պարոն Միսաքեանը երկու ձեռքով բռնեց տիկնոջ աջը եւ բարեկամաբար սեղմեց:

Այդ ոտքից գլուխ, սեւ հագուստով պատած պատոելի անձը Բաղէշի հայ-բողոքականների երէց Ջալլադն էր, որին այժմ իր տոհմանունով պարոն Միսաքեան էին կոչում: Իսկ նրա հիւրընկալը մեր վաղեմի ծանօթ Սագօն էր, որին այժմ կոչում էին Սարգիս Սեպուհեան: Փոխուած դրութեան հետ, փոխել էին նրա առաջոայ թէ՛ կեղծ եւ թէ՛ կրճատած անունները: Իսկ նրա տիկինը տէր Թոդիկի դուստր Սօնան էր: Նա ամուսնացաւ իր հին վարժապետի աղջկայ հետ: Երկու բախտաւոր ամուսինները ունէին մի քանի զաւակներ, որոնց մեծը սովորում էր Գերմանիայում:

Տէր Թոդիկը վաղուց չկար այդ աշխարհում. նա մեռաւ «ախտարքը» ծոցում...

Դ

Սալմաստ գաւառի Սաւրայ գիւղի հայոց թաղում խիստ աչքի էր զարկում մի մաշուած տուն, որը ոչ այնքան հնութիւնից, որքան անխնամութիւնից կորցրել էր իր վաղեմի շքեղութիւնը: Գիշեր եւ ցերեկ այդ խուլ, գերեզմանի պէս անմռունչ տան դռները փակ էին: Այնպէս էր թւում, որ ոչ ոք այնտեղ չէր բնակւում: Միայն երբեմն ճռնչալով շարժւում էին ժանգոտած ծխնիները, դռները բացւում էին, դուրս էր գալիս մի թախծալի դէմքով կին, նստում էր դռան մօտի թումբի վրայ եւ ամբողջ ժամերով լուռ նայում էր փողոցի միջով անցնող գետակին, կարծես նրա տխուր մրմունջների մէջ կամենում էր թաղել իր սրտի դառն կսկիծները: Նա իր հասակից աւելի վաղ էր ծերացել, որպէս այն մաշած տունը, որտեղից դուրս էր գալիս նա: Նրա տխրամած դէմքի թուխ գծերի մէջ, նրա սեւ աչքերի մթութեան մէջ նշմարւում էին անմխիթար հոգու խորին վշտերը, որ թաքուցած էին նրա խորտակած, վիրաւորած կուրծքի մէջ: Նրա սգաւոր հայեացքը այնպիսի տպաւորութիւն էր գոր-